600.0300.02.11.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 նոյեմբերի 2016 թվականի №300Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի №273Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿԱՐԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության 2016 թվականի սեպտեմբերի 27-ի N04/11.1/12810-16 գրությունը, որով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) տեղեկացվել է անհատ ձեռնարկատեր Կարեն Ղուկասյանին պատկանող ռադիոցանցի բազային ռադիոկայանի տեղափոխման վերաբերյալ,

բ) Հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 3-ի ՈԱԲ-19212 գրությունը, որով անհատ ձեռնարկատեր Կարեն Ղուկասյանը ծանուցվել է ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության պայմաններով նախատեսված բազային ռադիոկայանի տեղադրման վայրի փոփոխության փաստի ուսումնասիրության նպատակով Հանձնաժողովի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 3-ին իր նկատմամբ հարուցված վարչական վարույթի մասին,

գ) անհատ ձեռնարկատեր Կարեն Ղուկասյանի 2016 թվականի հոկտեմբերի 25-ի գրությունը՝ առանց թույլտվության տեղափոխված բազային ռադիոկայանի աշխատանքը դադարեցնելու և Հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 18-ի №273Ա որոշմամբ հաստատված ռադիոհաճախականությունների օգտագործման №1002 թույլտվության պայմաններում փոփոխություն կատարելու վերաբերյալ, և

հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 18-ի «Անհատ ձեռնարկատեր Կարեն Ղուկասյանին ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №273Ա որոշմամբ հաստատված ռադիոհաճախականության օգտագործման №1002 թույլտվության պայմանների 4-րդ կետի 2-րդ, 4-րդ և 10-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «2) բազային ռադիոկայանի տեղադրման վայրը՝ քաղաք Երևան, Դավիթաշեն, 3-րդ փողոց, 10 տուն.».

   «4) բազային ռադիոկայանի տեղադրման վայրի աշխարհագրական կոորդինատները՝ 44E 29′ 13′′, 40N 13′ 07′′.».

   «10) անտենայի բարձրությունը երկրի մակերեսից՝ 9 մետր.»:

2. Կարճել Հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 3-ի №ԱԲ-1921Հ գրությամբ անհատ ձեռնարկատեր Կարեն Ղուկասյանի նկատմամբ ռադիոհաճախականության օգտագործման №1002 թույլտվության պայմանների խախտման համար 2016 թվականի հոկտեմբերի 3-ին հարուցված վարչական վարույթը:

3. Ընդունել ի գիտություն, որ անհատ ձեռնարկատեր Կարեն Ղուկասյանն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Կարեն Ղուկասյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
2 նոյեմբերի 2016թ.
ժամը 16[00]